Ավետիք Իսահակյան

Բաշերն ալեծո՛ւփ, բաշերն հողմակո՛ծ

Բաշերն ալեծո՛ւփ, բաշերն հողմակո՛ծ
Ազատ դաշտերով նժույգս է թրոչում,
Եվ սմբակներից բըխում է հո՛ւր – բո՛ց
Դաշտերն են թնդում, վախ առած փախչում:

Ազատամարտի հրդեհից կըգամ,
Ուր կուրծքն ում ճեղքել թշնամու դժխեմ.
Դրոշն է ձեռքիս վեհ ազատության.
Եվ հաղթանակի երգերով վսեմ:

Արյուն է ծորում սրես ոխերիմ.
Դրոշն է ծըփում ոսկե ամպերում –
Չար բռունցքի տակ հեծող աշխարհքին
Նոր գարունների համբավն եմ բերում:

Նժույգս է թռչում բաշերն հողմակոծ,
Եվ շառաչում են սանձ ու ասպանդակ,
Զրահս է շաչո՛ւմ, բխո՛ւմ հուր ու բոց,
Ջի՞լ շառաչում են սանձ ու ասպանդակ:

Այս շղթաներն են շառաչում ոտքիս,
Օ՜, թռի՛ր, նժույգ, այս քարե պարկից,
Այս մըռայլ բանդի կամարն է կըրծքիս,
Մի՛ կանգնիր, նժույգս, սլացի՛ր արագ…

1909

Ղազարապատ